

Որակի հռչակագիր Արդյունաբերական երկաթուղային տրանսպորտ

Ընդհանուր տեղեկատվություն վիճակագրական արտադրանքի մասին		
0.1	Անվանումը	Արդյունաբերական երկաթուղային տրանսպորտ
0.2	Ոլորտը	Տրանսպորտ
0.3	Պատասխանատու մարմինը, բաժինը, անձը և այլն	Արմստատ Տրանսպորտի և կապի վիճակագրության բաժին Բաժնի պետ Անահիտ Ներսիսյան Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Հանրապետության պող., Կառավարական տուն 3 Հեռախոս՝ +374 11 582949 Էլ. փոստ՝ anahit_nersisyan@armstat.am , info@armstat.am
0.4	Նպատակը և պատմությունը	<p>Օգտագործողներին տրամադրել արդիական տեղեկատվություն ոչ ընդհանուր օգտագործման արդյունաբերական երկաթուղային տրանսպորտի արտադրանքի (բեռնափոխադրում (տոննա, վագոն), բեռնաշրջանառություն՝ կազմակերպության սեփական և վարձակալած մերձատար ուղիներով, բեռնման և բեռնաթափման ցուցանիշներ՝ որից ընդհանուր մեքենայացմամբ, արդյունաբերական երկաթուղային տրանսպորտային ծառայություններից ստացված հասույթ (առանց ավելացված արժեքի հարկի), բեռնափոխադրումների շահագործման հետ կապված ծախսեր, շահագործական և բացված գծի երկարություն, կազմակերպության շարժակազմի քանակը՝ էլեկտրաքարշեր, ջերմաքարշեր, մայրուղային բեռնատար վագոններ արդյունաբերության համար) վերաբերյալ:</p> <p>Ցուցանիշների հաշվառումն ունի երկար տարիների պատմություն և վարվում է 20-րդ դարի 30-ական թվականներից: Տարիների ընթացքում այն պարբերաբար կատարելագործվել է՝ միջազգային դասակարգումներին, ցուցանիշների կազմին և այլ չափորոշիչներին համադրելիությունն ապահովելու նկատառումներով:</p>
0.5	Օգտագործողները և կիրառումը	<p>Վիճակագրական տեղեկատվության հիմնական օգտագործողներն են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, հասարակական, գիտակրթական, ֆինանսական կազմակերպությունները, գործարար համայնքը, զանգվածային լրատվամիջոցները, միջազգային կազմակերպությունները և այլն:</p> <p>Արդյունաբերական երկաթուղային տրանսպորտի արտադրանքի ցուցանիշները կիրառվում են տրանսպորտի բնագավառում ռազմավարությունների մշակման, մարտավարական խնդիրների լուծման, բիզնես միջավայրի վերլուծության, զարգացման միտումների բացահայտման և այլ նպատակներով:</p>

0.6	Տեղեկությունների աղբյուրները	Ցուցանիշների կազմման հիմնական աղբյուրը վիճակագրական հաշվետվություններով իրավաբանական անձանցից տարեկան պարբերականությամբ հավաքվող տվյալներն են:
0.7	Տվյալների հավաքման իրավական լիազորությունը	Տվյալները հավաքվում են «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի և «Հնգամյա վիճակագրական ծրագրի» հիման վրա, ինչպես նաև ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2016թ. հունիսի 20-ի «Վիճակագրական տվյալների հավաքման կարգը հաստատելու մասին» թիվ 05-Ն և «Տարեկան վիճակագրական ծրագիրը հաստատելու մասին» որոշումների հիման վրա:
0.8	Ռեսպոնդենտների (սկզբնական տեղեկություններ ներկայացնողների) ծանրաբեռնվածությունը	Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածություն չի հաշվարկվում:

1 Բովանդակություն

1.1	Բովանդակության նկարագիրը	<p>Ոչ ընդհանուր օգտագործման տրանսպորտն իրականացնում է տվյալ կազմակերպության բեռների փոխադրումները ոչ ընդհանուր օգտագործման մերձատար ուղիներով:</p> <p>Արդյունաբերական երկաթուղային տրանսպորտի արտադրանքի հիմնական ցուցանիշներն են բեռների փոխադրումների ծավալը (տոննա, վագոն), բեռնաշրջանառությունը (տոննա-կիլոմետր), շահագործական և բացված գծի երկարությունը:</p>
1.2	Վիճակագրական հասկացություններ	<p><i>Հիմնական հասկացություններ</i></p> <p>Փոխադրվել են բեռներ կազմակերպության ուղիներով (տոննա) և փոխադրվել են բեռներ կազմակերպության ուղիներով (վագոն (հատ)) ցուցանիշներում ցույց է տրվում կազմակերպության ուղիներով փոխադրումների ընդհանուր ծավալը:</p> <p>Բեռնաշրջանառությունը (տոննա-կմ) ցուցանիշը որոշվում է փոխադրված բեռների քանակի (տոննա) և փոխադրման հեռավորության (կմ) արտադրյալով, ներառյալ հարևան մերձատար ուղու հեռավորությունը, եթե այդ ուղիով շարունակվում է բեռների փոխադրումը:</p> <p>Վագոնների բեռնման և բեռնաթափման աշխատանքների ծավալներում ներառվում է ինչպես երկաթուղային (տրանսպորտային) արտադրամասի, այնպես էլ հաշվետու կազմակերպության այլ արտադրամասերի բեռնիչների և մեխանիզմների միջոցով կատարված աշխատանքների ծավալները, որոնք կատարվել են տվյալ մերձատար ուղին շահագործող կազմակերպության (ներառյալ հաշվետվություն չկազմող կոնտրագենտները) սեփական կամ վարձակալված միջոցներով:</p> <p>Բեռնման և բեռնաթափման ընդհանուր աշխատանքների ծավալից</p>

		<p>առանձնացվում է մեքենայացմամբ կատարված աշխատանքների ծավալը: Մեքենայացված եղանակով կատարված աշխատանքների ծավալում ընդգրկվում են այն բեռնման-բեռնաթափման աշխատանքները, որոնք կատարվել են տարբեր տեսակի բարձրան տրանսպորտային սարքավորումներով՝ տրանսպորտորներով (ծանր բեռներ փոխադրելու համար), ավտոկռունկներ, ավտոբեռնիչներ, ինչպես նաև ինքնաբեռնող շարժակազմ և այլն:</p> <p>Մայրուղային բեռնատար վագոններին են դասվում ծածկած վագոնները, ցիստեռները, ցեմենտատարները, ինչպես նաև քիմիական արտադրանք տեղափոխող հատուկ ցիստեռները:</p> <p>Արդյունաբերության համար բեռնատար վագոններն են՝ դումպկարները (ինքնաթափ վագոն), ինչպես նաև տորֆ, կոքս, հանքաքար, տաք չուգուն, այուր, անտառանյութ և այլ ապրանքատեսակներ տեղափոխող վագոնները:</p> <p>Շահագործվող գծի երկարությունը որոշվում է մերձատար ուղու սահման նշանից մինչև երկաթուղային գծերի վերջնակետն ընկած գծերի առանցքի երկարությամբ, անկախ նրանից՝ ամենաերկար գիծը հանդիսանում է ինքնուրույն, թե այդ հեռավորությունը ընդգրկում է իր մեջ մի քանի ուղիներ, ճյուղավորումներ, վայրէջքներ: Ընդհանուր օգտագործման ճանապարհների ցանց մուտք չունեցող շահագործվող գծերի երկարությունը որոշվում է ըստ կազմակերպությունների վերջնակետերի միջև ընկած գծերի առանցքի երկարության: Շահագործվող գծի երկարության մեջ ընդգրկվում են բոլոր ճյուղավորումները, որոնց վրա կատարվում են բեռնման-բեռնաթափման աշխատանքները: Ոչ ընդհանուր օգտագործման երկաթուղիների ուղեբաժանքների (բացի գլխավորների) կամ կայարանային ուղիների երկարությունը չի ընդգրկվում շահագործվող գծի երկարության մեջ, նույնիսկ եթե կայարանային ուղիները միաժամանակ օգտագործվում են վագոնների բեռնման և բեռնաթափման համար:</p> <p>Բացված գծի երկարությունը որոշվում է բացված մերձատար ուղու, առանց բացառության բոլոր գծերի (գլխավոր, կայարանային, հատուկ) երկարությունների հանրագումարով:</p> <p>Արդյունաբերական երկաթուղային տրանսպորտի աշխատանքներից (ծառայություններից) ստացված հասույթը (առանց ավելացված արժեքի հարկի)՝ արդյունաբերական երկաթուղային տրանսպորտի աշխատանքներից և ծառայություններից (բեռների փոխադրումներ, բեռնման-բեռնաթափման աշխատանքներ, բեռների վերամշակում պահեստներում և այլն) ստացված հասույթն է:</p> <p>Բեռների փոխադրումների շահագործման ծախսերը ներառում են</p> <ul style="list-style-type: none"> • կազմակերպության արդյունաբերական երկաթուղային տրանսպորտով բեռնափոխադրումների հետ կապված աշխատողների (դիսպետչերներ, գնացքակազմող բրիգադների
--	--	---

		<p>աշխատողներ, սլաքավարներ, կապի աշխատողներ, գնացքավարներ, շարժակազմի վերանորոգման աշխատողներ և այլ աշխատողներ) աշխատավարձը և դրան հավասարեցված այլ վճարումներ.</p> <ul style="list-style-type: none"> • շարժակազմի և բեռնափոխադրումների հետ կապված շինությունների շահագործման ծախսերը (վառելիք, էլեկտրաէներգիա, նյութեր). • հիմնական միջոցների ամորտիզացիոն մասհանումներ. • այլ ծախսեր (մերձատար ուղու վարձավճար, վագոնների մաքրման վճար և այլն): <p>Շահագործման ծախսերի մեջ չեն ներառվում բեռնաման-բեռնաթափման ծախսերը (բեռնիչների, մեխանիզատորների աշխատավարձը, բեռնման-բեռնաթափման մեխանիզացիայի և սարքավորումների ամորտիզացիան, վառելիքը, էլեկտրաէներգիան, տեխնիկական սպասարկումը), վագոնների գերնորմատիվային պարապուրդների համար վճարվող տուգանքները, բեռների փոխադրման սակագինը:</p> <p><i>Ճյուղային ընդգրկունություն</i></p> <p>Ոչ ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտն ընդգրկում է արդյունաբերության բոլոր ճյուղերը:</p> <p><i>Աշխարհագրական ընդգրկունություն</i></p> <p>Ընդգրկում է Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերը և Երևան քաղաքը:</p>
2. Ժամանակայնություն		
2.1	Հաշվետու ժամանակահատվածը	Տարեկան
2.2	Հրապարակման ամսաթիվը	«Հայաստանի վիճակագրական տարեգիրք», հրապարակվում է հաջորդ տարվա տարեվերջին:
2.3	Ճշտապահություն	Տվյալները հրապարակվում են տարեկան ծրագրերով հրապարակման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներից ուշացումներ չեն արձանագրվել:
2.4	Հաճախականությունը	Տարեկան
3. Ճշգրտություն		
3.1	Ընդհանուր ճշգրտություն	<p>Ընդհանուր ճշգրտությանն առնչվող կոնկրետ քանակական չափումներ չեն իրականացվում:</p> <p>Հետազոտությունը հիմնված է իրավաբանական անձանց համատարած դիտարկումների վրա: Հետազոտության մեջ տնտեսվարող սուբյեկտների ընդգրկումը և դրանց կողմից պաշտոնական վիճակագրական տեղեկությունների պարտադիր</p>

		տրամադրումն ամրագրված է վիճակագրության ոլորտը կարգավորող իրավական փաստաթղթերում: Պատասխանների մակարդակը մոտ 95% է:
3.2	Անճշտության աղբյուրները	Գլխավոր համակցությունը կազմում է 80 տնտեսավարող սուբյեկտ, ընդ որում տվյալները հավաքվում են՝ ոչ ընդհանուր օգտագործման տրանսպորտի սուբյեկտներից՝ տարեկան պարբերականությամբ: Մահմանված ժամկետում վիճակագրական տվյալների չներկայացման դեպքում կրկնվում են նախորդ ժամանակաշրջանի տվյալները:
3.3	Ճշգրտության չափումները/ չափելիությունը	-
4 .Համադրելիություն		
4.1	Ժամանակագրական համադրելիություն	-
4.2	Համադրելիությունն այլ վիճակագրության հետ	Առկա է համադրելիություն այլ աղբյուրներից ստացվող վիճակագրության (օրինակ՝ կազմակերպությունների տնտեսական գործունեության հետազոտության) հետ:
4.3	Նախնական և վերջնական վիճակագրության միջև փոխկապվածությունը	Առաջին անգամ հրապարակված տվյալները որակվում են նախնական: Հրապարակված տվյալների փոփոխություններն ուղեկցվում են բացատրական ծանոթագրություններով: Նախնական տվյալները վերանայվում են տնտեսավարող սուբյեկտների կողմից ներկայացված ճշգրտումների և այլ ստուգաճշտումների հիման վրա: Վերջնական տվյալները ներկայացվում են տարեկան հրապարակումներում:
5 .Մատչելիություն		
5.1	Տարածման ձևաչափ	Տարեկան հրապարակումներ «Հայաստանի վիճակագրական տարեգիրք» (հայերեն, ռուսերեն և անգլերեն): «Հայաստանը թվերով» վիճակագրական ժողովածու (հայերեն և անգլերեն): Տվյալների բազաներ http://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=602c2fcf-531f-4ed9-b9ad-42a1c546a1b6 Բնտերնետային հասցե Հրապարակումների էլեկտրոնային տարբերակները հասանելի են հայերեն (ամբողջական), ռուսերեն և անգլերեն, հետևյալ հասցեով:

		http://www.armstat.am/am/?nid=82:
5.2	Հիմնական նյութերը. Պահպանումն ու կիրառելիությունը	<p>Ռեսպոնդենտներից հավաքվող վիճակագրական հաշվետվությունները պահպանվում են ինչպես թղթային, այնպես էլ էլեկտրոնային եղանակով: Էլեկտրոնային շտեմարանները ներառում են</p> <p>Իրավաբանական անձանց համար. ա/ իրավաբանական անձի ծածկագիրը բ/ հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ), գ/ պետական ռեգիստրում գրանցման համարը, դ/ իրավաբանական անձի լրիվ անվանումը, ե/ կազմակերպական-իրավական ձևը, զ/ իրավաբանական անձի գործունեության իրականացման վայրը (փոստային հասցեն), հեռախոսահամարը, ինչպես նաև հայեցողական կարգով էլեկտրոնային փոստի հասցեն, է/ իրականացված շինարարության ծավալը (առանց ավելացված արժեքի և այլ անուղղակի հարկերի), Անհատ ձեռնարկատերերի համար. ա/ անունը, ազգանունը, բ/ հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ), գ/ պետական ռեգիստրում գրանցման համարը, դ/անհատ ձեռնարկատերերի գործունեության իրականացման վայրը (փոստային հասցեն), հեռախոսահամարը, ինչպես նաև հայեցողական կարգով էլեկտրոնային փոստի հասցեն, ե/ իրականացված շինարարության ծավալը (առանց ավելացված արժեքի և այլ անուղղակի հարկերի)</p>
5.3	Այլ տեղեկատվություն	<p>Առկա է տեղեկատվություն Ընդհանուր վիճակագրական բիզնես-գործընթացի մոդելի համաձայն հետևյալ հասցեով՝ https://www.armstat.am/am/?nid=373:</p>
5.4	Այլ տեղեկատվություն	<p>Արդյունաբերական երկաթուղային տրանսպորտի արտադրանքի հիմնական ցուցանիշների հաշվարկման վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը զետեղված է ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2018թ. նոյեմբերի 12-ի «Արդյունաբերական նշանակության երկաթուղային տրանսպորտի աշխատանքի մասին» Ձև 1-երկաթ (տարեկան) վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման մեթոդական ցուցումը հաստատելու մասին» թիվ 63-Ն որոշմամբ հաստատված հավելված 2-ում:</p> <p>Մեթոդաբանական պարզաբանումներ են առկա նաև «Հայաստանի վիճակագրական տարեգրքում»:</p>
6. Լրացուցիչ փաստաթղթավորում		
6.1		Լրացուցիչ փաստաթղթավորում առկա չէ: